

**ՀՀ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ  
ՏԱՐԱԾԱՇՐՉԱՆԱՅԻՆ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈՐՁԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ  
Գրիգորյան Տ. Կ.**

Հոդվածը նվիրված է ՀՀ պետական բյուջեի ծախսային քաղաքականության վերլուծությանը, որի շրջանակներում քննարկել ենք բյուջեի բաշխումն ըստ գործառնական ոլորտների, ինչպես նաև ուսումնասիրել ենք արտասահմանյան երկրների օրինակը: Հենվելով Հայաստանի և միջազգային փորձի վերլուծության վրա՝ եկել ենք այն եզրահանգման, որ բյուջեի ծախսային քաղաքականության մեջ անհրաժեշտ է կատարել որոշ փոփոխություններ:

**Բանալի բառեր.** պետական բյուջե, համայնքային բյուջե, բյուջեի ծախսային ծրագիր, ՏԻՄ, ծախսային գերակայություն, գործառնական դասակարգում:

Հայաստանի Հանրապետությունը տնտեսական դժվարությունների հաղթահարման փուլում գտնվող, սոցիալական դժվարություններ ունեցող, պատերազմող պետություն է, ուստի ՀՀ կառավարության որդեգրած քաղաքականությունն ուղղված է հենց այս խնդիրների լուծմանը:

Հոդվածը շարադրելիս նպատակ ենք հետապնդել միջազգային փորձի ուսումնասիրության համատեքստում վերլուծել և բացահայտել ՀՀ վերոնշյալ խնդիրների լուծման ուղղությամբ վարվող բյուջետային քաղաքականության արդյունավետությունն ու առանձնահատկությունները:

Հայաստանում բյուջետային համակարգը երկրի ֆինանսական գլխավոր օղակն է: Համաձայն «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի՝ «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգն իրավունքի նորմերով կարգավորվող՝ Հայաստանի Հանրապետության տնտեսական

հարաբերությունների և Հայաստանի Հանրապետության պետական կառուցվածքի վրա հիմնված հետևյալ երկու մակարդակի բյուջեների ամբողջությունն է. առաջին մակարդակ՝ պետական բյուջե, երկրորդ մակարդակ՝ համայնքների բյուջեներ» [1]:

Անհրաժեշտ է որոշակի տարբերակում դնել «պետական բյուջե», «համայնքային բյուջե» և «բյուջե» հասկացությունների միջև:

«Բյուջե»-ն այս կատեգորիայի ընդհանուր անվանումն է. այն արտահայտում է որոշակի ժամանակահատվածի համար եկամուտների և ծախսերի նախահաշիվ՝ հաստատված կառավարման իրավասու մարմնի կողմից: Այն՝ որպես ֆինանսական փաստաթուղթ, քանակական արտահայտությամբ արտացոլում է պետության կողմից դրամական միջոցների կենտրոնացման և դրանց օգտագործման գործընթացը: Այն ոչ միայն ֆինանսական, այլև իրավական փաստաթուղթ է, որը, հաստատվելով պետության օրենսդիր մարմնի կողմից, ձեռք է բերում օրենքի ուժ [2]: Պետական և համայնքային բյուջեները միասին անվանվում են համախմբված բյուջե: Այս բյուջեները ՀՀ կառավարության կամ տեղական ինքնակառավարման մարմինների որոշակի ժամանակահատվածի ֆինանսական ծրագրերն են [3]:

ՀՀ բյուջետային համակարգի կառուցվածքում գերակա տեղ է զբաղեցնում պետական բյուջեն, հենց պետական բյուջեին էլ վերապահված է պետության գործառույթների իրականացման ֆինանսական ապահովվածության խնդրի լուծումը: Լինելով բյուջետային համակարգի անբաժան մասեր՝ այս երկու սեկտորները՝ պետական և համայնքային բյուջեները, սերտորեն կապված են միմյանց: Դա գլխավորապես արտահայտվում է պետական բյուջեից համայնքային բյուջեներին տրամադրվող հատկացումների ձևով: Համայնքային բյուջեների սեփական եկամուտները մեր հանրապետությունում դեռևս ցածր մակարդակ ունեն, որոնց հաշվին ՏԻՄ-երն ի վիճակի չեն իրականացնելու օրենքով իրենց վերապահված լիազորությունները, ուստի համայնքային բյուջեներին պետական բյուջեից ֆինանսական հատկացումներ են արվում դոտացիաների, սուբսիդիաների, բյուջետային վարկերի, բյուջետային փոխատվությունների, բյուջետային երաշխիքների տեսքով, ինչպես նաև ֆինանսական հատկացումներ են արվում պետության կողմից ՏԻՄ-երին պատվիրակված լիազորությունների իրականացման համար:

Այն պետք է ուղղված լինի պետության հասարակական կյանքի տարբեր ասպեկտներում առկա խնդիրների լուծմանը կամ

առաջնահերթությունների իրականացմանը: Այդպիսի խնդիրներ կամ առաջնահերթություններ կարող են լինել, օրինակ, տնտեսության անհրաժեշտ ճյուղերի և ոլորտների զարգացումը, բարձր տեխնոլոգիաների ներդրումը, հասարակական արտադրության կառուցվածքի անհրաժեշտ փոփոխությունը և այլն: Այդ խնդիրների լուծման համար պետությունը իրականացնում է բյուջետային ծախսեր:

Ամեն մի պետություն ինքն է որոշում, թե որտեղ ավելի շատ ներդրումներ պետք է իրականացնի՝ ելնելով իր առաջնահերթություններից և ազգային շահերից, և, որպես կանոն, որտեղ կատարենք առավելագույն ներդրումներ, այդտեղ էլ կստանանք նախընտրելի արդյունք:


ՀՀ կառավարությունն առաջիկա տարիներին առավել կարևորում է պետական բյուջեի ծախսային հետևյալ գերակայությունները.

- սոցիալական ոլորտի առանձին ճյուղերում՝ կրթության, առողջապահության, սոցիալական պաշտպանության ոլորտների, ինչպես նաև պետական մարմինների գործունեության արդյունավետության մակարդակի բարձրացման, ծառայությունները ավելի մատչելի դարձնելու նպատակով իրականացվող բարեփոխումների ֆինանսական ապահովում,
- պաշտպանության և ազգային անվտանգության կառույցների կենսագործունեության համար անհրաժեշտ ֆինանսական միջոցներով ապահովում տնտեսության առանձին ոլորտներում, մասնավորապես՝ գյուղատնտեսությանը, ջրային տնտեսությանը, ճանապարհային տնտեսությանը և էներգետիկայի ոլորտին [4]:


Որպեսզի պարզենք, թե ինչպիսի առանձնահատկություններով են աչքի ընկնում ՀՀ բյուջետային ծախսերը, համեմատենք տարածաշրջանի և մի քանի այլ երկրների պետական բյուջեի ծախսերն ու ծախսային կառուցվածքները:

Այս երեք պետությունների պետական բյուջեների ընդհանուր ծավալային տարբերությունը զգալի է, եթե համեմատենք Հայաստանն ու Ադրբեջանը և Վրաստանն ու Ադրբեջանը:

Ադրբեջանում մոտ 4.5 անգամ ավել է պետբյուջեի ծախսերի ծավալը: Հայաստանում այն կազմում է ընդամենը 3.407 մլրդ. ԱՄՆ դոլար, Վրաստանում՝ 3.538 մլրդ. ԱՄՆ դոլար և Ադրբեջանում՝ 14.868 մլրդ. ԱՄՆ դոլար:



Գծապատկեր 1. Պետական բյուջեի ծախսերի գործառնական դասակարգումը (ԱՄՆ դոլար) Հայաստանի, Վրաստանի, Ադրբեջանի Հանրապետություններում 2019թ. [5,6,7]:



Գծապատկեր 2. Պետական բյուջեի ծախսերի գործառնական դասակարգումը (%) Հայաստանի, Վրաստանի, Ադրբեջանի Հանրապետություններում 2019 թ.

Ինչպես երևում է, բյուջեի գործառնական դասակարգմամբ, Ադրբեջանի Հանրապետությունում առավելագույն ծախսերը կատարվել են տնտեսական գործունեության ոլորտում: Պետք է նշել, որ Ադրբեջանի տնտեսությունը աչքի է ընկնում բազմազանությամբ. արտադրվում է պողպատ, մեքենաներ և սարքավորումներ, սինթետիկ կաուչուկ, ավտոդողեր, քիմիական նյութեր, մրգի և ձկան պահածոներ, հացահատիկային բույսեր և այլն: Չնայած այս բազմազանությանը՝ նավթագազային ոլորտը տալիս է համախառն ներքին արտադրանքի 37%-ը և արտահանման 90%-ից ավելին: Տնտեսության կարևորագույն խնդիրը և նպատակը նավթագազային արդյունաբերությունից տնտեսության կախման թուլացումն է, քանի որ նավթի գնի փոփոխությունը համաշխարհային շուկայում զգալիորեն անդրադառնում է երկրի տնտեսական վիճակի վրա: Վերջին 12 տարում նավթի գների կտրուկ անկման պատճառով Ադրբեջանը մի քանի անգամ հայտնվել է սոցիալ-տնտեսական ճգնաժամի մեջ: Առաջին տնտեսական ճգնաժամը դիտվել է 2008 թվականին, որը կարճ տևեց, և 2009-ին արդեն նավթի գները սկսել են աճել՝ հասնելով 120 դոլարի: Երկրորդ ճգնաժամը եղել է 2015-ին, երբ նավթի գինը կտրուկ նվազել է՝ հասնելով 60 դոլարի: Երրորդ ճգնաժամն Ադրբեջանում գրանցվում է այսօր, երբ նավթի գները պատմական անկում են գրանցում, ինչը ենթադրում է Ադրբեջանի տնտեսությանը ավելի մեծ վնաս՝ ի տարբերություն նախորդ դեպքերի:

2020 թ. ապրիլի 20-ին WTI նավթի տեսակի 1 բարելի գինը հասել է պատմական՝ 40 դոլարի: Սա պատմության մեջ առաջին դեպքն է, երբ նավթի գինը կարող է լինել բացասական: Բացասական գինը ենթադրում է, որ արդյունահանողները պետք է վճարեն գնորդներին՝ նավթը ձեռք բերելու համար: Երևանի ժամանակով 21:56-ին WTI տեսակի նավթի 1 բարելի գինը հասել է 0 դոլարի: Այն մեկ օրվա ընթացքում երկրորդ անգամ գրանցել է պատմական մինիմում և հասել ներկայիս գնի [8]: Պետք է նշել, որ Ադրբեջանի Հանրապետությունը որոշակի հաջողության հասել է այս առումով, եթե հաշվի առնենք ազգային վիճակագրական կոմիտեի հրապարակած տվյալները՝ ՀՆԱ-ի կառուցվածքի վերաբերյալ, ըստ որում՝ 2012 թ.-ից ի վեր ՀՆԱ-ում նավթագազային արտադրությունը այլևս չի գերազանցում ոչ նավթագազային արտադրության ծավալները: Տնտեսության մեջ նման ահռելի ներդրումները շատ մոտ ապագայում կտային իրենց արդյունքները, եթե չստեղծվեր վերը նշված ճգնաժամային իրադրությունը: Կարծում ենք՝ Ադրբեջանի այս օրինակին պետք է հետևի նաև Հայաստանի կառավարությունը և որոշակի

վերանայում կատարի պետական բյուջեի բաշխման մեջ՝ մասնավորապես ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների և տնտեսական գործունեության ոլորտների հետ կապված:

ԱՀ-ն հսկայական ծախսեր է կատարում նաև հասարակական կարգերի, ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների ոլորտներում, ինչպես նաև որպես պատերազմող պետություն, ինչպես Հայաստանը, հսկայական ֆինանսական ներդրումներ են կատարվում պաշտպանության ոլորտում: Եթե փորձենք զուգահեռներ անցկացնել այս երկու պետությունների ռազմական ծախսերի միջև, տարբերությունը ահռելի է՝ մոտ 3 անգամ (զձ.1):

Վրաստանի Հանրապետությունում բյուջետային ծախսերի մեջ առավել մեծ հատված ուղղված է սոցիալական պաշտպանությանը. ինչպես Հայաստանում, Վրաստանում ևս այս ոլորտը թիրախային է: Չնայած որ Վրաստանը հաջողել է տնտեսական բարեփոխումները, ինչի մասին վկայում է վերջին 5 տարիների կտրվածքով ՀՆԱ-ի ծավալի աճը՝ գրեթե 1,4 անգամ, մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ն աճել է 4062 ԱՄՆ դոլարից 4764 ԱՄՆ դոլարի [9], այնուամենայնիվ դեռ չեն լուծվել շատ սոցիալական խնդիրներ՝ բարձր գործազրկության մակարդակը (13,5% 2018թ.), անհավասարությունները և աղքատությունը [10]: 2019թ.-ի տվյալներով թոշակառուները կազմել են ամբողջ բնակչության 16 %-ը, նվազագույն կենսաթոշակը 200 լարի է, իսկ նվազագույն սպառողական զամբյուղը՝ 174 լարի, եթե նկատենք, որ աղքատության նվազագույն շեմը Վրաստանում ամսական 82,8 լարի է, ապա կարող ենք ասել, որ թոշակառու և աշխատող քաղաքացիները աղքատ չեն, և ի վիճակի են սպառելու նվազագույն սպառողական զամբյուղին համարժեք 2300 կալորիան: 2019 թվականի դեկտեմբեր ամսվա տվյալներով՝ 18 տարեկանից ցածր 150,2 հազարից ավելի մարդ համարվել է սոցիալապես անպաշտպան, որոնցից 46.3 հազարը՝ մինչև 6 տարեկան: Վրաստանը Եվրոպայում առաջատար դիրք է գրավում ծայրահեղ աղքատության պայմաններում ապրող երեխաների թվով, իսկ ընդհանուր առմամբ, աղքատությունը 20,1% է [11]:

Մեծ ֆինանսական ներդրումներ են կատարվում նաև ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների, տնտեսական գործունեության և կրթության ոլորտներում (տե՛ս զձ. 2):

Հայաստանում պետբյուջեի առավելագույն ծախսերը ներգրավվել են սոցիալական պաշտպանության խնդիրների մեղմման մեջ: ՀՀ սոցիալական պաշտպանության համակարգը գործիքների և

մեխանիզմների ամբողջություն է, որը միտված է անձի, ընտանիքի և հասարակության բնականոն կենսագործունեությանը և նյութական պահանջմունքների բավարարման ապահովմանը [12]:


Սոցիալական ոլորտում առկա խնդիրները առավել պատկերավոր դարձնելու համար ներկայացնենք ոլորտը ներկայացնող թիրախային խմբերից որոշակի տվյալներ. բնակչության 16%-ը՝ ավելի քան 466 հազ., կենսաթոշակառու է, սոցիալական նպաստ ստացող ընտանիքների թիվը՝ 86200, հաշվառված առաջին, երկրորդ, երրորդ կարգի հաշմանդամների թիվը՝ 19200, գործազուրկների թիվը՝ մոտ 220500, 2017թ.-ին աղքատ եղել է բնակչության 25.7%-ը, որից 1.4%-ը՝ ծայրահեղ աղքատ, իսկ 2018 թ.՝ համապատասխան 23.5% և 1%:

Չնայած իրականացվող ծրագրերին, որոնք ֆինանսավորվում են պետական բյուջեից, նպաստների համապատասխանությունը բնակիչների կարիքներին շարունակում է խնդրահարույց լինել, քանի որ մարդիկ, որոնք ստանում են սոցիալական նպաստ, շարունակում են լինել աղքատ, այսինքն՝ դրանց չափը աղքատության 42621 դրամ սահմանը դեռևս չի հատում:

Ինչպես նշեցինք, յուրաքանչյուր պետություն իր խնդիրների լուծման համար պետք է կատարի ֆինանսական ներդրումներ, բայց, նախ և առաջ, պետք է ստեղծի այդ ֆինանսական միջոցները. սա խոսում է զարգացած տնտեսություն ստեղծելու անհրաժեշտության մասին:

Համեմատության համար որպես օրինակ կարող ենք ներկայացնել ՌԴ բյուջետային ծախսերի առանձնահատկությունները: Ռուսաստանը՝ որպես զարգացող պետություն, ձգտում է էլ ավելի զարգացնել իր տնտեսական հնարավորությունները, ուստի 2019թ.-ի դաշնային բյուջեից, որը կազմում է 20 տրիլիոն 187,84 մլրդ ռուբլի, ամենաշատ ներդրումները կատարել է հենց տնտեսական հարաբերություններում՝ բյուջեի 27,1%, պաշտպանությանը՝ 16,2%, կրթությանը՝ 4,6%, հանրային ծառայություններին՝ 1,1%, սոցիալական պաշտպանությանը՝ 12,5 %:

ԳԴՀ-ն, որը Եվրոպայի տնտեսապես ամենազարգացած պետությունն է, 2019թ.-ի բյուջեից՝ 356.4 մլրդ. եվրո, տնտեսական հարաբերությունների զարգացմանը հատկացրել է 2,9%-ը, 12,1%-ը հատկացվել է պաշտպանությանը, 5,12%-ը՝ կրթությանը, սոցիալական պաշտպանությանը՝ 3,5%:



**Գծապատկեր 3. Պետական բյուջեի ծախսերի գործառնական դասակարգումը ՀՀ-ում 2017-2020 թթ. (մլրդ. դրամ)**

Հաջորդիվ քննարկենք մինչհեղափոխական և հետհեղափոխական ժամանակահատվածում Հայաստանի պետական բյուջեի ծախսային առանձնահատկությունները:

Ըստ էության՝ մինչհեղափոխական և հետհեղափոխական Հայաստանում պետական բյուջեի ծախսերի գծով կտրուկ փոփոխություններ չեն եղել (ըստ գծ. 4-ի), տոկոսային առումով աննշան աճ գրանցվել է պաշտպանության, ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների, սոցիալական պաշտպանության, հասարակական կարգի, առողջապահության ոլորտներում: Սա նշանակում է, որ այժմ էլ պահպանվել են այն առաջնահերթությունները, որոնք ակտուալ էին նաև հեղափոխությունից առաջ:

Այսպես, ընդհանուր բնույթի հանրային ծառայություններում պետական բյուջեից հատկացվել են ահռելի միջոցներ. բյուջեի 19.7%-ը, եթե համեմատենք հարևան պետություններ հետ, որոնց և՛ բնակչության թիվը, և՛ բյուջեի ծավալները գերազանցում են մեր տվյալները, կարող ենք միանշանակ ասել, որ մեր հանրապետության պետական բյուջեի ծախսերի ծրագիրը ակնհայտ ունի վերանայման կարիք:

ՀՀ պետական բյուջեի ծախսերի ծրագրով 2019թ.-ին պաշտպանության ոլորտում ներդրվել է բյուջեի 19,1%-ը, որը տոկոսային

\*ՏԵՂԵԿԱՆՔ ՀՀ 2020թ. պետական բյուջեի լրամշակված նախագծի հիմնական ցուցանիշների վերաբերյալ



առումով զիջում է 2017թ.-ին, նույնը չի կարելի ասել ներդրման ծավալային մեծության մասին: Սա պետք է կապել այն հանգամանքի հետ, որ պետական բյուջեի և՛ ծախսերը, և՛ եկամուտները նախորդ տարիների համեմատ աճել են:

Հայաստանի Հանրապետության համար պաշտպանության ոլորտի հզորացումը ռազմավարական նշանակություն ունի: Ռազմարդյունաբերության հետ կապված այսօր Հայաստանը սեփական արտադրության զենք և սպառազինություն ունի, ինչը մի քանի տարի առաջ հեռավոր երազանք էր թվում:

ՀՀ բյուջեից կրթությանը տրամադրվել է ծախսերի 7,9%-ը: Կրթական ծախսերի կառուցվածքում գերակշռում են միջնակարգ ընդհանուր կրթությանն ուղղվող ծախսերը՝ 44.4%-ը, և նախադպրոցական և տարրական ընդհանուր կրթությանը ուղղվող ծախսերը: 2019թ.-ին նկատելի աճել է կրթությանը տրամադրվող օժանդակ ծառայություններին ուղղվող ծախսի տեսակարար կշիռը:

2019 թ. ընթացքում արձանագրվել է 9% արդյունաբերական աճ, ընդ որում՝ վերամշակող արդյունաբերության բաժինը աճել է մոտ 7 տոկոսային կետով, և հանքագործական արդյունաբերության բաժինը նվազել է 3 տոկոսային կետով:

2019թ.-ին գրանցվել է 9.4% արտահանման ծավալների աճ. մասնավորապես ունենք կոնյակի արտահանման աճ՝ մոտ 27 %-ով, բուսական ծագման արտադրանքի արտահանման աճ՝ 18.5%-ով, շոկոլադի արտադրանքի արտահանում՝ մոտավորապես 15 %-ով և այլն: Հետաքրքրաշարժ է գինիների արտահանման ծավալների աճը. 2019 թ.-ի ընթացքում աճել է ավելի քան 50 տոկոսով: Սա նոր զարգացում է մեր տնտեսության մեջ: Ընդհանուր առմամբ աճել է և՛ արտահանումը, և՛ տնտեսական աճի տեմպը: Հայաստանի ԱՎԾ տվյալների համաձայն՝ համախառն ներքին արդյունքի նման բարձր աճ չի գրանցվել 2007 թվականից ի վեր՝ մոտ 6,6 տրիլիոն: Կարևոր է նշել, որ դրական ցուցանիշներ են արձանագրվել ոչ բոլոր ոլորտներում: Մասնավորապես սա վերաբերում է գյուղատնտեսությանը:

Վերջին մի քանի ամիսների ընթացքում ինչպես ամբողջ աշխարհում, այնպես էլ Հայաստանում գլոխ բարձրացրած պանդեմիան՝ COVID 19 վարակի տարածումը, իր հետ առաջ է բերել մի շարք խնդիրներ: Հատկապես առողջապահության, կրթության, տնտեսության ոլորտներում ծառայել են դժվարություններ, որոնք

առաջնային լուծում պահանջող հարցեր են և պահանջում են հսկայական չնախատեսված ծախսեր:

Կարծում ենք, որ Հայաստանում առկա այս ոլորտային խնդիրների լուծման ակունքում պետք է դնել տնտեսության զարգացումը՝ դրանում առավել մեծ ծավալի ֆինանսական միջոցների ներդրումը և խելամիտ օգտագործումը: Տնտեսության զարգացումը (նոր ճյուղերի հիմնում, եղած ճյուղերի զարգացում) ենթադրում է նաև աշխատատեղերի ստեղծում, ինչը լուծում է շատ սոցիալական խնդիրներ, բացի այդ, այն հնարավորություն է տալիս մեծացնել բյուջեի ծավալը, ուստի նաև տարբեր ոլորտներում ներդրումային և առկա խնդիրների լուծման հնարավորությունները: Հենվելով մեր այս վերլուծության վրա՝ կարող ենք ասել, որ, ըստ էության, պետական բյուջեի ծախսային ալգորիթմը ենթակա է որոշակի վերանայման: Մասնավորապես, առավել մեծ ծավալի ծախսեր անհրաժեշտ է կատարել՝

- գիտության և կրթության ոլորտում, քանի որ յուրաքանչյուր պետության զարգացման հենքը հենց գիտելիքն ու նորարարություններն են,
- պաշտպանության ոլորտում. լինելով պատերազմող երկիր և շրջապատված լինելով Հայաստանի նկատմամբ ագրեսիվ վերաբերմունք ունեցող երկրներով՝ մեզ համար պետք է առաջնային լինի պաշտպանության ոլորտի զարգացումն ու արդիականացումը,
- չափազանց կարևորում ենք նաև ներդրումների մեծացումը տնտեսական գործունեության մեջ՝ ամուր տնտեսություն ստեղծելու և սրանով մյուս ոլորտներին ֆինանսական միջոցներով ապահովելու համար:

## **ПОЛИТИКА БЮДЖЕТНЫХ РАСХОДОВ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ В КОНТЕКСТЕ РЕГИОНАЛЬНОГО И МЕЖДУНАРОДНОГО ОПЫТА**

**Григорян Т. К.**

Статья посвящена анализу расходной политики государственного бюджета РА, в рамках которой мы обсудили распределение бюджета по сферам деятельности, а также примеры зарубежных стран. Основываясь на анализе опыта Армении и международного сообщества, мы пришли к выводу, что в политику бюджетных расходов необходимо внести некоторые изменения.

**Ключевые слова:** государственный бюджет, бюджет сообщества, программа бюджетных расходов, орган местного самоуправления, приоритет расходов, оперативная классификация.

## BUDGET EXPENDITURE POLICY OF THE REPUBLIC OF ARMENIA IN THE CONTEXT OF REGIONAL AND INTERNATIONAL EXPERIENCE

Grigoryan T. K.

The article is devoted to the analysis of the expenditure policy of the state budget of the Republic of Armenia, in the framework of which we discussed the distribution of the budget by fields of activity, as well as the examples of foreign countries. Based on the analysis of the experience of Armenia and the international community, we came to the conclusion that some changes need to be implemented in the context of the budget expenditure policy.

**Keywords:** state budget, community budget, program of budget expenditure, local government, priority of expenses, operational classification.

### ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքը (ընդունված է Ազգային ժողովի կողմից 24 հունիսի 1997 թ.):
2. Գրիգորյան Ն. Հ. ՀՀ բյուջետային համակարգը և հիմնական առանձնահատկությունները: Երևան: Ա/Ձ «Արսեն Ժամհարյան»: 2016 թ.: 88 էջ:
3. «ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենք, հոդված 2:
4. <http://www.irtek.am/views/act.aspx?aid=150781> (01.06.2020)
5. <https://static.president.az/media/W1siZiIsIjIwMTgvMTIvMjIvOHd1NmksaTUzaV9RQU5VTI9CVURDRV8ucGRmIl1d?sha=ab18e8fc118dff25> (05.06.2020)
6. <https://www.geostat.ge/ka/modules/categories/387/momsakhurebis-statistika298> (07.06.2020)
7. [https://www.armstat.am/file/article/sv\\_12\\_18a\\_211.pdf](https://www.armstat.am/file/article/sv_12_18a_211.pdf) (07.06.2020)
8. <https://www.theice.com/products/213/WTI-Crude-Futures/data?marketId=5164584> (11.06.2020)

9. <https://www.geostat.ge/ka/modules/categories/23/mtliani-shida-produkti-mshp> (17.06.2020)
10. Григорьев Л. Грузия: особенности экономического роста. // Бюллетень о текущих тенденциях мировой экономики, Аналитический центр при Правительстве Российской Федерации. 2019 июль. Выпуск № 46. 27 с.
11. <https://interfax.com.ua/news/general/591099.html> (25.06.2020)
12. «Հայաստանի հանրապետության ազգային անվտանգության ռազմավարության դրույթներից բխող՝ աշխատանքի և սոցիալական պաշտպանության ոլորտի զարգացման ծրագիրը և միջոցառումների ցանկը հաստատելու մասին» N 452-Ն որոշում (ընդունված է 15 ապրիլի 2010):

**Տեղեկություններ հեղինակի մասին**

**Գրիգորյան Տ. Կ.** – ուսանողուհի, մագիստրատուրա II կուրս

Երևանի պետական համալսարան

Էլ. փոստ՝ [Tatev.grigyan@gmail.com](mailto:Tatev.grigyan@gmail.com)

Տրվել է խմբագրություն՝ 03.08.2020

Գրախոսվել է՝ 02.12.2020